ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

11 հուլիսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

94
(2944)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010)   + 374 10 546423   info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## «ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ» ԲՅՈՒՋԵՆ ԿԱԶՄՈՒՄ Է ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ 30%-Ը






ՀՀ ԿԳՄՍ նախարարն անտեղյակ է իր գլխավորությամբ իրականացվող «Ակադեմիական քաղաքի» նախագծի մանրամասներից եւ շարունակ մոլորեցնում է հանրությանը: Բացատրենք՝ ինչպես. Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրով սահմանվում է «Ակադեմիական քաղաքի» կառուցման նախագիծը: Ըստ ԿԳՄՍ նախարարության՝ «Ակադեմիական քաղաքը» լինելու է համալսարանական եւ հետազոտական կամպուս՝ անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներով, որն ապահովելու է որակյալ եւ միջազգային չափանիշներով մրցունակ բարձրագույն կրթության եւ հետազոտության միջավայր: «Ակադեմիական քաղաքի» տարածքում հնարավոր կլինի տեղակայել մինչեւ 16 բուհ՝ օրենքով նախատեսված մինչեւ 8 պետական խոշորացված բուհ եւ մինչեւ 8 ոչ պետական կամ միջազգային բուհ: Բանն այն է, որ հուլիսի 9-ին ներկայացվեց «Ակադեմիական քաղաքի» գլխավոր հատակագծի հայեցակարգի վերջնական տարբերակը, որի ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը լրագրողների հետ զրույցում ասաց, որ «Ակադեմիական քաղաքի» մեկնարկը տրվելու է 2030 թվականին, իսկ պետական եւ ոչ պետական բուհերի միացման մասով նշել է. «Ես այս պահի դրությամբ չեմ կարող ամբողջ ճշգրտությամբ ասել, մենք աշխատում ենք, որպեսզի օր առաջ բուհերն այդ միջավայրում կարողանան գործել»:

Մեկ ամիս անց մասնավոր բուհերի՝ «Ակադեմիական քաղաք» հայեցակարգին միանալն արդեն հաստատ չէ, եւ նախարարի խոսքն արդեն դողում է:

«Ակադեմիական քաղաքի» գլխավոր հատակագծի վերջնական տարբերակը պատրաստ է: Գերմանական ճարտարապետական ընկերության ներկայացուցիչ Թոբիաս Քեյլն էր մանրամասն ցուցադրում՝ ինչեր են լինելու: «Ակադեմիական քաղաքի» հայեցակարգի ի հայտ գալուց հետո՝ նախարար Ժաննա Անդրեասյանը թմբկահարում էր, որ քաղաքը պատրաստ կլինի 2030 թվականին, սակայն գերմանական ճարտարապետական ընկերության փոխտնօրենը հակադարձեց նախարարին եւ հերքեց արդեն 2 տարի շարունակ վանկարկվող թեզերը: Թոբիաս Քեյլն ասաց, որ 2029 թվականին առաջին շենքերը կկառուցվեն, իսկ քաղաքը կարող է ամբողջանալ 20-30 տարում: Ստացվում է, որ ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ստել է այսքան ժամանակ, կամ, ինչպես տեսնում ենք նրա պատասխաններից՝ որոշ բաներից անտեղյակ է: Նախարարը ոչ միայն ժամկետների հարցում է ստել՝ 20-30 տարի միջակայքում սխալվելով, այլ նաեւ «Ակադեմիական քաղաքի» նախագծի ֆինանսաբյուջետային մասով: Հարկ է նշել, որ ՀՀ պետական պարտքը կազմում է 11 մլրդ 943 մլն ԱՄՆ դոլար, գրեթե 4 տրիլիոն եւ ավելի դրամ, «Ակադեմիական քաղաքին» տրամադրվող 1,2 տրիլիոն դրամը կազմում է ՀՀ պետական պարտքի գրեթե 30%-ը: ***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***



«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի գործով հակակոռուպցիոն դատարանը ծանուցում է ուղարկել ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Առաքել Մարտիկյանին՝ դատարան հարցաքննության ներկայանալու համար: Ասել է թե՝ հերթական վկան, որ պետք է հարցաքննվի ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Առաքել Մարտիկյանն է: Հակակոռուպցիոն դատարան են հրավիրվելու նաեւ վկաներ՝ ՊՆ նախկին նախարար Սեյրան Օհանյանը, ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանը եւ ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանը: Հակակոռուպցիոն կոմիտեն նախապես հաստատված վկաներից միայն չի հարցաքննի Արայիկ Հարությունյանին, քանի որ նա հակառակորդի կողմից գերեվարված է: Նշենք, որ ՀՀ Գլխավոր դատախազությունը պաշտոնապես հայտնել էր, որ Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանի վերաբերյալ քրեական գործն ուղարկել է դատարան: Հիշեցնենք՝ օգոստոսի 30-ին Միքայել Արզումանյանը ձերբակալվել էր Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում՝ պաշտոնեական անփութություն կատարելու մեղադրանքով: Ըստ ՔԿ-ի՝ գեներալ-լեյտենանտը 2020 թվականի հոկտեմբերի 30-ից մինչեւ նոյեմբերի 9-ը Շուշիի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում անփույթ վերաբերմունք է դրսեւորել իր ծառայողական պարտականությունների նկատմամբ՝ չկատարելով եւ ոչ պատշաճ կատարելով դրանք, ինչը անզգուշությամբ առաջացրել էր ծանր հետեւանքներ: Օգոստոսի 31-ին Արզումանյանի ձերբակալման ժամկետը լրացել էր, նա ազատ էր արձակվել, սակայն նրան կալանավորելու միջնորդություն էր ներկայացվել դատարան, եւ սեպտեմբերի 1-ին Արզումանյանը կալանավորվել էր ու մինչեւ օրս կալանքի տակ է:



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Տավուշի թեմը նոր առաջնորդ չի ունենա. Վեհափառը մտադիր չէ Բագրատ Սրբազանին փոխարինող նշանակել: Այսպիսով՝ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանը դեռ մայիսի 26-ին հայտարարեց, որ սառեցնում է հոգեւոր ծառայությունը եւ պատրաստ է լինել ժամանակավոր կառավարության վարչապետի թեկնածու: Այսինքն, ըստ էության, արդեն մի քանի ամիս շարունակ Տավուշի թեմի առաջնորդի տեղը թափուր է մնում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մոտ 20 օր առաջ Վեհափառը եկեղեցականների խորհրդի նիստ է հրավիրել, որի ժամանակ էլ որոշվել է, որ Տավուշի թեմը նոր առաջնորդ չի ունենա, այսինքն՝ Բագրատ Սրբազանին փոխարինող չեն ընտրի: «Ժողովուրդ» օրաթերթը այս առնչությամբ դիմեց նաեւ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն տեր Եսայի քահանա Արթենյանին, վերջինս էլ մեզ հետ զրույցում ասաց. «Ներկայում Տավուշի թեմը ղեկավարվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ ձեւավորված վարչական խորհրդի կողմից: Այլ տնօրինության պարագայում, ինչպես կարգն է՝ պատշաճ կերպով, հանրությունը կծանուցվի»:




Որ պետական համակարգում վաղուց չեն գործում պետության կողմից ընդունված օրենքները, նորություն չէ, բայց, որ դրանք հայտնաբերելու կամ կանխարգելելու գործառույթն ամբողջությամբ վերապահվել է մամուլին, մտահոգիչ է: Այսպիսով՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի 5 խորհրդականներից Նարեկ Արաքսման-Մանուկյանը թերեւս ամենաազդեցիկն է՝ հաշվի առնելով նրա առաջատար դիրքը: Եվ ահա, սույն խորհրդականը, համաձայն իր ստացած եկամուտների, վարձատրվում է նաեւ ԱԱԾ-ից: ԿԳՄՍ նախարարի խորհրդականը նախարարությունից ստանում է տարեկան 6 մլն 250 հազար դրամ աշխատանքի վարձատրություն, իսկ ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունից որպես աշխատանքի վարձատրություն ստանում է 2 մլն 139 հազար դրամ: Ինչպես է 2 պետական հիմնարկում միաժամանակ աշխատում Նարեկ Արաքսման-Մանուկյանը՝ դժվար է պատկերացնել, քանզի դա ոչ միայն օրենքն է արգելում, այլեւ տարածությունը եւ ժամանակը: Նարեկ Արաքսման-Մանուկյանի անունը հանրությանը հայտնի դարձավ լրագրողի՝ ԱԱԾ-ում հավաքագրելու փաստից հետո: Հիշեցնենք, որ 2014-ին Հրայր Մանուկյանի կողմից տարածվեց մի ձայնագրություն, որից պարզ էր դառնում, որ ԱԱԾ աշխատակիցը պահանջում է լրագրող, «Ժառանգություն» կուսակցության վարչության անդամ Հրայր Մանուկյանից աշխատել ԱԱԾ-ի համար՝ սպառնալով, որ առաջարկը մերժելը կարող է ունենալ «հետեւանքներ»: ԱԱԾ-ականը նաեւ ակնարկել էր, որ իրենց պահանջը չկատարելու դեպքում՝ «հետեւանքներն» իրենց վրա կարող են զգալ նաեւ Մանուկյանի հարազատները: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

ԶՐՈՒՅՑ

# «ՄԵՐ ՎԱՐԿԱՆԻՇԸ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է». ԱՂԱԶԱՐՅԱՆ

**ArmLur.am-ը զրուցել է ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի հետ:**



**-Պարո՛ն Աղազարյան, սոցիարցումներ իրականացնող «Գելլափ» ընկերությունը հերթական անգամ հարցում է իրականացրել, եւ կազմակերպության հրապարակած արդյունքներով՝ իշխանության վարկանիշը կրկին իջել է, եւ պատճառն այն է, որ քաղաքացիների մեծ մասը համաձայն չէ իշխող ուժի վարած քաղաքականության եւ սահմանազատման ներկա արդյունքների հետ, այս մասին ի՞նչ կասեք:**

-Իշխանության վարկանիշը, եթե իջել է, ինչքա՞ն է դարձել: Առավել առարկայական մեկնաբանության համար ես պետք է հստակ կերպով իմանամ այդ ցուցանիշները, թե ինչ թվերի մասին է խոսքը: Ես համաձայն չեմ, թե մեր վարկանիշն իջել է:

**-Այսինքն, Ձեր դիտարկմամբ, որեւէ փոփոխություն չի՞ եղել, իշխանության վարկանիշը չի՞ իջել, այլ ընդհակառակը՝ ավելի՞ է բարձրացել:**

-Այո՛, կարծում եմ՝ իշխանության վարկանիշը բարձրացել է, որովհետեւ այնպիսի զգայուն հարց, ինչպիսին սահմանների ճշգրտումն ու սահմանազատումն է, եւ այն էլ այնպիսի զգայուն հատվածում, ինչպիսին Տավուշի մարզինն է, որի սահամազատման ֆոնին որոշ ուժեր փորձեցին ժողովրդի մեջ անհնազանդության ալիք բարձրացնել, եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացին չկանգնեց այն անհատների կողքին, որոնք ՀՀ քաղաքացի չէին եւ ուզում էին իշխանություն փոխել Հայաստանում, նշանակում է՝ ՀՀ քաղաքացին իր խոսքն ասաց, եւ, ընդհանուր առմամբ, ես պետք է գնահատեմ, որ այս պահի դրությամբ հասարակությունը դեմ չէ իրականացվող քաղաքականությանը: Ես ա՛յդ տվյալներն ունեմ, որոնցով կարող եմ դատողություններ անել:

**-Պարո՛ն Աղազարյան, նշում եք, որ իշխանության վարկանիշը բարձր է, բայց փաստ է, որ այս օրերին մեծ թվով քաղաքացիներ հանրահավաքներ, անհնազանդության ակցիաներ են իրականացնում ու պահանջում են իշխանափոխություն ու ընդվզում են երկրում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ:**

-Պարբերաբար հանրահավաքներ անցկացնողների 90 տոկոսը ռեւանշիստներ են, փողով բերվածներ: Իհարկե, նրանք մեր քաղաքացիներն են եւ իրավունք ունեն հանրահավաքների միջոցով իրենց դժգոհությունն արտահայտելու, բայց նրանք շատ փոքր մաս են կազմում:

**-Բայց տեսնում ենք, որ բազմաթիվ հասարակ քաղաքացիներ են մասնակցում, որոնք որեւէ կուսակցության պատկանելիություն չունեն: Ձեր խոսքերից ստացվում է՝ Դուք նրանց պիտակավորում եք, թե ուղղորդված են գալիս ակցիային, եւ ինչ-որ շահ ունեն դրանից:**

-Այո՛, բոլոր հանրահավաքների մասնակցիների 70 տոկոսը փողով է գալիս:

**-Կարծում եք՝ երկրում որեւէ խնդիր չկա՞, իրենք պարզապես ուղղորդված, որեւէ շահի նպատակով գալի՞ս են:**

-Ես կարծում եմ՝ խնդիր կա, եւ այդ խնդիրները ակցիան գլխավորող ուժերը փորձում են օգտագործել իշխանության գալու համար, բայց ՀՀ քաղաքացին ասում է բոլորին՝ «Հանգիստ վե՛ր ընկեք տեղներդ», այդ թվում՝ նաեւ ինձ, ասում է՝ «Ես կորոշեմ ինչպես, եւ երբ փոխել իշխանությունը»:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԼՈՒՐԵՐ

## ՈՎ Է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը մարտի 6-ին պայմանագիր է կնքել «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի հետ՝ ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 3 միլիարդ 663 միլիոն 779 հազար դրամ:

Պայմանագրով նախատեսվում է հիմնանորոգման աշխատանքներ իրականացնել Հոռոմ-Արթիկ-Ալագյազ հանրապետական նշանակության ավտոճանապարհի, Նոր Կյանք-Փանիկ-Արեւշատ-Մեծ Մանթաշ, Թաթուլ-Կանչ-Հակկո ավտոճանապարհների տարբեր հատվածներում:

Իսկ ո՞ւմ է պատկանում «Մերձմոսկովյան» ԲԲ ընկերությունը:

«Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի հետ պայմանագիրը կնքվել է հրատապ՝ բաց մրցույթի գնման եղանակով:

«Մերձմոսկովյան» ԲԲԸ-ն հիմնադրվել է 1995 թվականին: Ընկերության տնօրենն Արամ Ադամյանն է, ում հետ էլ կնքվել է պայմանագիրը: Արամ Ադամյանը Գյումրու «Բալասանյան դաշինք»-ի ավագանու անդամ Արտակ Ադամյանի հայրն է: Ընկերությունը տարբեր տարիներին մի շարք պայմանագրեր ունի ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, Գյումրու համայնքապետարանի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եւ այլ կառույցների հետ:

Դեռ 2024 թվականի մարտ ամսին հայտնի էր դարձել, որ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել են չորս անձինք, որոնցից երկուսը Շիրակի մարզպետարանի պաշտոնյաներ են: Նրանցից մեկը Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Խաչատուր Խնձրցյանն էր, մյուսը՝ նույն բաժնի մասնագետ Մկրտիչ Ասատրյանը: Պաշտոնյաները կասկածվում են կաշառք ստանալու մեջ:

Aravot.am-ին հայտնի էր դարձել, որ այս նույն գործի շրջանակում՝ միայն թե կաշառք տալու կասկածանքով, ձերբակալվել է շինարարական ընկերություններից մեկի պատասխանատու Արտակ Ադամյանը:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ՆԱՏՕ-Ն ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ 40 ՄԻԼԻԱՐԴ ԵՎՐՈ ԿՏՐԱՄԱԴՐԻ

Հյուսիսատլանտյան դաշինքի երկրները մտադիր են Վաշինգտոնում ընթացող գագաթնաժողովում հայտարարել 2025 թվականին Ուկրաինային առնվազն 40 միլիարդ եվրոյի օգնություն տրամադրելու մասին: Այս գումարը տրվելու է հակամարտության ընթացքում Ռուսաստանին հակազդելու համար: Այս մասին ասվում է ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի վարչակազմի հայտարարության մեջ:

«Դաշնակիցները կհայտարարեն հաջորդ տարվա ընթացքում նվազագույնը 40 միլիարդ եվրոյի հիմնական ֆինանսավորում տրամադրելու իրենց մտադրության մասին՝ այսպիսով ապահովելով անվտանգության կայուն մակարդակ՝ Ուկրաինային գերակշռելու հնարավորություն տալու համար», - նշվում է տեքստում:

## ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Վաշինգտոնում այսօր (խմբ.) տեղի կունենա ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի, Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի եւ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի եռակողմ հանդիպումը:

Չնայած, որ ավելի վաղ Հայաստանի արտգործնախարարությունից հայտնել էին, թե նախարարների պաշտոնական հանդիպման պայմանավորվածություն չկա:

Ինչ սպասել Միրզոյան-Բայրամով հանդիպումից, արդյոք Հայաստանի ԱԳ նախարարության նախանշած մեկ ամսում հնարավոր կլինի՞ հասնել խաղաղության պայմանագրի կնքմանը:

Քաղաքագետ Արմեն Բաղդասարյանը նշում է՝ Ադրբեջանը Վաշինգտոնում կփորձի հասնել խաղաղության պայմանագրի նախաստորագրմանը:

Նշենք, որ Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներ Արարատ Միրզոյանի եւ Ջեյհուն Բայրամովի վերջին բանակցությունները տեղի են ունեցել մայիսի սկզբին Ալմաթիում:

Հիշեցնենք, որ հուլիսի 9-ին Վաշինգտոնում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը մասնակցել է նաեւ ՆԱՏՕ-ի 75-ամյակին նվիրված՝ ԱՄՆ նախագահի անունից կազմակերպված պաշտոնական ընդունելությանը:

Նախարար Միրզոյանը շփումներ է ունեցել ՆԱՏՕ անդամ եւ գործընկեր երկրների ԱԳ նախարարների հետ:

ՀՀ-ԱՄՆ երկկողմ օրակարգի եւ տարածաշրջանային հարցերի շուրջ մտքեր են փոխանակվել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ:

## «Gallup»-Ի ՆՈՐ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Գելլափ ինթերնեյշնել ասոցիացիա»-ի հայաստանյան գրասենյակի հարցումների համաձայն՝ ՀՀ քաղաքացիների 39,4%-ն ընդհանրապես բացասական է գնահատում Նիկոլ Փաշինյանի կողմից իրականացվող սահմանազատման ու սահմանագծման գործընթացը:

Լիովին դրական է գնահատում 16,7 %-ը, ավելի շուտ դրական՝ 21,2%-ը, ավելի շուտ բացասական՝ 17,5%-ը, 5,2%-ը դժվարացել է պատասխանել հարցին:

## ՇԱՐԺՈՒՄ՝ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԵՄ

Վրաստանում ներկայացվել է «Միացյալ չեզոք Վրաստան» նոր հասարակական-քաղաքական շարժումը, որը դեմ է երկրի եվրաինտեգրմանը, ինչպես նաեւ նրա՝ ՆԱՏՕ մտնելուն:

«Այսօր Վրաստանում եվրաինտեգրումը կրոն է հռչակվել, ինչը հանցագործություն է վրաց ժողովրդի դեմ: Այս մեղքի բաժինը կիսում են իշխանությունները: Թեեւ ՆԱՏՕ-ն դեռեւս չունի կրոնի կարգավիճակ, սակայն իշխանությունների մեղքն այն է, որ նրանք սահմանադրական խնդիր են սահմանել ՆԱՏՕ-ին ինտեգրումը»,- ասել է շարժման առաջնորդ Վատո Շաքարաշվիլին:

## ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԸ՝ ԹԱՓՈՒՐ



Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը դեռ թափուր է մնում:

Հիշեցնենք, որ հուլիս 3-ին Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմում խուզարկությունների արդյունքում բերման էին ենթարկվել Արաբկիրի թաղապետ Արամ Ազատյանն ու նրա տեղակալ Դավիթ Բալասանյանը: Վերջիններս ձերբակալվել էին:

Քննչական կոմիտեից հայտնել էին, որ վարույթը հարուցվել է մի խումբ պաշտոնյաների կողմից, իշխանական լիազորությունները չարաշահելով, առանձնապես խոշոր չափով վնաս պատճառելու, կաշառք ստանալու, տալու եւ կաշառքի միջնորդության հոդվածներով: Առանց անուններ նշելու՝ իրավապահները հայտնել են՝ մեղադրանք է առաջադրվել 8 մարդու, այդ թվում՝ 3 պաշտոնյայի:

Խուզարկությունից մեկ օր անց Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Ազատյանն ու նրա երկու տեղակալները՝ Գեղամ Կարապետյանն ու Դավիթ Բալասանյանը կալանավորվեցին:

Վարչական շրջանի ղեկավար Ազատյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը եւ 30 մլն դրամ գրավ. իսկ տեղակալներն անազատության մեջ են:

«Ժողովուրդ» օրաթերթին քաղաքապետի մամուլի խոսնակ Հայկ Կոստանյանը հայտնեց, որ Արաբկիրի թաղապետի ԺՊ մինչ օրս չի նշանակվել:

Այսինքն՝ թաղապետի կալանավորումից շուրջ 6 օր անց՝ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը թափուր է մնում:

## 2,4 ՄԼՆ ԴՈԼԱՐ՝ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՐ

ԱՄՆ ՄԶԳ-ն 2,4 մլն դոլար կտրամադրի ՀՀ-ին քաղաքացիների անձնական տվյալների պաշտպանության ոլորտի զարգացման համար: Այս մասին իր ասուլիսի ժամանակ հայտարարել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կառավարիչ Սամանթա Փաուերը:

«Այս պահին հայտարարում եմ եւս 2,4 մլն դոլարի ֆինանսավորման մասին, որը կօգնի ամրապնդելու իրավական դաշտը, որպեսզի տեխնոլոգիաներն այնպես զարգանան, որ պաշտպանված լինեն քաղաքացիների անձնական տվյալները, եւ որպեսզի երաշխավորված լինեն քաղաքացիների, մարդու իրավունքները»,-հայտարարել է նա:

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

# ՏՈՒՆԸ ԿՎԱՃԱՌԵՆ, ԻՍԿ ԳՈՒՄԱՐԸ ԿԿԻՍԵՆ

**Գագիկ Խաչատրյանի ընտանիքին պատկանող ԱՄՆ–ում գտնվող անշարժ գույքի գործի հետ կապված միջազգային «Վինսոն եւ Էլկինս» ընկերությունը հրապարակել է հաղորդագրություն:**



ԱՄՆ-ում շուրջ 2 տարի տեւած հետաքննությունից հետո Խաչատրյանների կողմից որեւէ իրավախախտում կատարելու, այդ թվում՝ ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի «Հոլմբի Հիլզ» թաղամասում գտնվող անշարժ գույքը անօրինական ճանապարհով ստացված եկամուտներով ձեռք բերելու հանգամանք չի հայտնաբերվել եւ չի հաստատվել:

«2024 թվականի հունիսի 11-ին Խաչատրյանների նկատմամբ հետաքննությունը դադարեցվել է: Հետաքննության դադարեցման եւ բռնագանձման գործի կասեցման որոշման հենքով արդարադատության դեպարտամենտը եւ Խաչատրյանները համաձայնություն են ձեռք բերել, որ «Հոլմբի Հիլզի» գույքի վաճառքից ստացված գումարի մի մասը կտրամադրվի Խաչատրյաններին, իսկ մյուս մասը՝ Խաչատրյանների դիմումով կտրամադրվի Հայաստանի Հանրապետությանը», ասված է հաղորդագրության մեջ:

Ինչպես ավելի վաղ տեղեկացրել էր «Ժողովուրդ» օրաթերթը՝ Հայաստանում հարուցված քրեական գործի շրջանակում Գլխավոր դատախազության եւ ԱՄՆ իրավասու մարմինների միջեւ արդյունավետ համագործակցության արդյունքում՝ ԱՄՆ իրավասու դատարանի որոշմամբ հանցավոր ծագում ունեցող գույք դիտարկվող՝ ՀՀ ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրյանի ընտանիքին պատկանող ԱՄՆ՝ Լոս Անջելեսում գտնվող առանձնատունը կբռնագրավվի եւ ամենաբարձր շուկայական արժեքով կվաճառվի:

Առանձնատան իրացման արդյունքում ստացված դրամական միջոցների գերակշիռ մասը Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու հարցի շուրջ Գլխավոր դատախազության եւ ԱՄՆ իրավասու մարմնի միջեւ բանակցություններ են ընթանում:

Հիշեցնենք, որ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցված քրեական գործով Գուրգեն եւ Արտյոմ Խաչատրյանների նկատմամբ իրականացվում է հանրային քրեական հետապնդում, այդ թվում՝ փողերի լվացման մեղադրանքով (Արտյոմ Խաչատրյանի վերաբերյալ գործն ուղարկվել է դատարան, Գուրգեն Խաչատրյանի նկատմամբ հայտարարված է հետախուզում), իսկ Գագիկ Խաչատրյանի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, առանձնապես խոշոր չափերով հափշտակություններ կատարելու, փողերի լվացմանը հանցակցելու եւ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու վերաբերյալ գործը ներկայում քննվում է Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում:

Գլխավոր դատախազության եւ ԱՄՆ իրավասու մարմինների միջեւ հետեւողական համագործակցության արդյունքում համապատասխան դատական գործընթաց էր նախաձեռնվել նաեւ ԱՄՆ իրավասու մարմինների կողմից:

Արդյունքում՝ 2024 թվականի հունիսի 14-ին Գուրգեն եւ Արտյոմ Խաչատրյանները, որոնց պատկանող գույքն անցնում է նաեւ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով, ԱՄՆ շրջանային դատարան էին ներկայացրել գույքի բռնագրավման կապակցությամբ համաձայնություն ձեռք բերելու խնդրանք, որը դատարանի կողմից վարույթ էր ընդունվել:

Դատարանի՝ 2024 թվականի հունիսի 30-ի որոշմամբ՝ համաձայնությունը հաստատվել է:

Քրեական վարույթներից բացի՝ Հակակոռուպցիոն դատարանում քննվող՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերի շրջանակում ՀՀ ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրյանից եւ նրան փոխկապակցված 25 անձանցից՝ ներառյալ որդիներ՝ Գուրգեն եւ Արտյոմ Խաչատրյաններից, պահանջվում է բռնագանձել 210 անշարժ գույք, 13 տրանսպորտային միջոց, նաեւ ավելի քան 33 միլիարդ դրամ:

*ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԻՆՉ ՀԱՐՑԵՐ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԸ

Տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Վարչության նիստ, որը վարել է Վարչության նախագահ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Քննարկվել են Գյումրի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության աշխատանքի հետ կապված հարցեր:

Հաստատվել են Կուսակցությանն անդամակցելու հայտ ներկայացրած քաղաքացիների դիմումները:

## ԱՄՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԿՈՉԸ

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը ողջունում է ԱՄՆ Կոնգրեսի հայկական հանձնախմբի համանախագահներ՝ Ֆրենք Փալոունի, Գուս Բիլիրակիսի, Ադամ Շիֆի եւ Դեյվիդ Վալադաոյի համատեղ հայտարարությունը, որով Բայդենի վարչակազմին կոչ է արվում պատասխանատվության ենթարկել Ադրբեջանին Արցախի էթնիկ զտումների համար, նպաստել Արցախ հայերի վերադարձին եւ ադրբեջանական շարունակական ագրեսիայի պայմաններում աջակցել Հայաստանի ինքնիշխանությանը:

Մեկնաբանելով կոնգրեսականների նախաձեռնությունը՝ Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նկատել է. «Մեր համայնքը, կոալիցիոն գործընկերները եւ Կոնգրեսի դաշնակիցները միավորված են Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու իր ռազմական հանցագործությունների համար՝ սկսած Ալիեւի կողմից Արցախի էթնիկ զտումից եւ քրիստոնեական սրբավայրերի ոչնչացումից մինչեւ Հայաստանի տարածքի շարունակական օկուպացիան եւ հայ գերիների ապօրինի կալանավորումն ու բռնությունը: Նախագահ Բայդենը, ով զինեց Ադրբեջանի կողմից Արցախի ցեղասպանությունը, այժմ պետք է ղեկավարի Արցախի հայերի անվտանգ եւ կայուն վերադարձի գլոբալ արշավը՝ միջազգային մանդատի ներքո, պաշտպանված միջազգային խաղաղապահների կողմից»:

Կոնգրեսի հայկական հանձնախմբի հայտարարությունը, որը համընկնում է այս շաբաթ Վաշինգտոնում ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի բացման հետ, կոչ է անում Բայդենի վարչակազմին «ապահովել, որպեսզի Ադրբեջանը առերեսվի իր գործողությունների հետեւանքներին եւ չխրախուսվի ռազմական հանցագործությունների, մարդու իրավունքների ոտնահարման եւ Լեռնային Ղարաբաղից ավելի քան 120.000 հայերի էթնիկ զտման համար»:

Նշվում է. «Ամերիկան պետք է աջակցի Հայաստանի ինքնիշխանությանը եւ մերժի Ադրբեջանի ագրեսիվ պահանջները: Սա նշանակում է՝ դադարեցնել ռազմական օգնությունն Ադրբեջանին եւ պատժամիջոցներ կիրառել չարաշահումների համար պատասխանատու պաշտոնյաների նկատմամբ»:

Կոչը եզրափակվում է՝ նշելով. «Քանի որ առաջնորդները հավաքվում են ՆԱՏՕ-ի գագաթնաժողովում, Բայդենի վարչակազմը պետք է երաշխավորի, որ Ադրբեջանը հետեւի է միջազգային օրենքներին՝ ներառյալ հայ ռազմագերիների վերադարձը, մշակութային ժառանգության օբյեկտների պաշտպանությունը եւ Լեռնային Ղարաբաղի հայերի՝ իրենց տները վերադառնալու իրավունքը՝ միջազգային երաշխիքների ներքո:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

ԻՆՉ ԵՆ ՓՆՏՐՈՒՄ

# ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ԱՐՄԱՎԻՐ» ՔԿՀ ԽՑԵՐՈՒՄ

**«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ «Արմավիր» ՔԿՀ-ի 6-րդ մասնաշենքի 27, 28, 36, 39, խցերում խուզարկություն է սկսվել:**



Դիմեցինք քրեակատարողական ծառայություն, որտեղից ծառայության հանրային կապերի բաժնի պետ Նոնա Նովիկյանը հայտնեց. «ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում պարբերաբար իրականացվում են խուզարկություններ՝ ազատազրկված անձանց մոտից բջջային հեռախոսներ, կտրող-ծակող առարկաներ եւ այլ արգելված իրեր հայտնաբերելու համար»:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը ներկայացրել է հունիս ամսվա հաշվետվությունը. հաղորդարության մեջ ասվում է.

«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը շարունակում է պայքարը քրեակատարողական հիմնարկներ թմրամիջոցների եւ արգելված իրերի ներթափանցման, ազատազրկված անձանց կողմից դրանց պահման եւ ապօրինի շրջանառության դեպքերը բացահայտելու եւ կանխելու ուղղությամբ:

Ըստ այդմ՝ Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի հատուկ նշանակության բաժնի, օպերատիվ վարչության, նույն վարչության տարածքային բաժինների եւ քրեակատարողական հիմնարկների անվտանգության ապահովման բաժինների ծառայողները 2024 թվականի հունիսի ընթացքում ազատազրկված անձանց համար բերված հանձնուքներից, ծանրոցից, տեսակցությունների եկած քաղաքացիների անձնական զննությամբ, ներնետված, ինչպես նաեւ խցերում, խորդանոցում, տաղավարում, արհեստագործական սենյակում եւ բնակելի գոտու այլ հատվածներում պատրաստված թաքստոցներից հայտնաբերել են 52,27 գրամ թմրամիջոցների նմանվող զանգվածներ, 105 բջջային հեռախոս, բջջային հեռախոսի 99 պարագա, 9 wi-fi սարք, 14 կտրող-ծակող առարկա, 88,5 լիտր ինքնաշեն ոգելից խմիչք եւ արգելված այլ իրեր:

Թվարկված բոլոր դեպքերով նախաձեռնվել են համապատասխան վարույթներ, նշանակվել են դատաքիմիական փորձաքննություններ»:

Ինչպես ավելի վաղ տեղեկացրել էինք՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության կողմից ստացված տեղեկություններն իրացնելով՝ նույն վարչության «Արմավիր» տարածքային բաժնի ծառայողները զննության էին ենթարկել կալանավորված անձ Ռ.Ս.-ի մոտ կարճատեւ տեսակցության եկած քաղաքացի Վ.Ն.-ին:

Արդյունքում՝ ծառայողները հայտնաբերել էին քաղաքացու մարմնում թաքցված փաթեթ, որում առկա էին եղել հերոին եւ մեթամֆետամին տեսակի թմրամիջոցներին նմանվող, համապատասխանաբար՝ 3.34 եւ 2.3 գրամ քաշերով առանձնացված զանգվածներ:

Վ.Ն.-ն ձերբակալվել էր օպերատիվ ծառայողների կողմից եւ հայտնաբերվածների հետ ներկայացվել ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ԱԱԾ ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԵՆ ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ

Shamshyan.com-ը գրել էր, որ հուլիսի 6-ին դանակահարություն է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Չարենցի փողոցի շենքերից մեկի 4-րդ հարկի բնակարաններից մեկում հայտնաբերել են արնանման հետքեր եւ դանակ: Մինչ ոստիկանների ու պարեկների՝ դեպքի վայր ժամանելը, «Աբովյան» բժշկական կենտրոնից ոստիկանության Նաիրիի բաժին եւս ահազանգ է ստացվել, որ դանակահարված վիճակում ծայրահեղ ծանր ախտորոշմամբ իրենց մոտ է տեղափոխվել մի քաղաքացի:

Ոստիկաններն ու պարեկները տեղում պարզել են, որ քաղաքացին նշված հասցեից է տեղափոխվել հիվանդանոց եւ նա Նոր Հաճնի բնակիչ 64-ամյա Վահան Հ.-ն է, որը, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն, ԱԱԾ նախկին աշխատակից է:

Դանակահարողը Նոր Հաճնի բնակիչ 31-ամյա Հարություն Դ.-ն է, ով հաշվառված է «ԱրՄեդ» հոգեբուժական եւ նարկոլոգիական ռեգիստրում: Ի դեպ, երբ ոստիկանները նրան փորձել են ձերբակալել, նա դիմադրություն է ցույց տվել, հարվածել է ոստիկաններից մեկին:

Ինչեւէ, հաջողվել է նրան ձերբակալել եւ դատարանի որոշմամբ՝նա արդեն կալանավորված է:

## ԴԱՏԱՐԱՆԻ ԲԱԿԻ ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ԴԵՊՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել Աջափնյակի դատարանի բակում «Շենգավիթի Սահակ» անունով հայտնի՝ Սահակ Վարդանյանի վրա կրակելու տեսաձայնագրությունը, թե ինչպես է նա դատարանից դուրս գալիս, եւ ինչպես են փորձում նրան սպանել:

2023 թվականի հոկտեմբերի 18-ին՝ժամը 14:55-ի սահմաններում, Ռաֆայել Փալանջյան Երեւան քաղաքի Նազարբեկյան թաղամաս 40 հասցեում գտնվող Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Աջափնյակ-1 նստավայրի վարչական շենքի ավտոկայանատեղիում ապօրինի կերպով կրած, ինքնաշեն եղանակով ձեւափոխված «Байкал-442» մոդելի, հրազեն հանդիսացող ատրճանակի գործադրմամբ փորձել էր ապօրինաբար կյանքից զրկել Սահակ Յուրիկի Վարդանյանին, սակայն իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը, իր կամքից անկախ հանգամանքներով, չի իրագործվել:

Իսկ ով էր Սահակ Յուրիկի Վարդանյանը:

Վերջինս հիշյալ օրը դատարան էր գնացել իրեն վերաբերող գործի քննությանը մասնակցելու համար: Ըստ այդ գործի՝Վարդանյանը մեղադրվում է սպանության փորձ պարտակելու մեջ, նրա հետ մեղադրյալի աթոռին է նաեւ սպանության սպառնալիք հնչեցնելու եւ սպանության փորձի մեջ մեղադրվող Արմեն Մանուկյանն ու եւս մեկ անձ՝ Արթուր Դավթյանը, որը մեղադրվում է սպանության փորձ պարտակելու մեջ:

Սահակ Վարդանյանը հայտնի է «Շենգավիթի Սահակ» անունով: Բացի այս արարքից՝Վարդանյանը 2018 թվականին մեղավոր է ճանաչվել եւ դատապարտվել նաեւ ապօրինի զենք կրելու համար:

Ըստ նախաքննական մարմնի՝ նրան սպանել ցանկացող մեղադրյալ Ռաֆայել Փալանջյանի կալանքի ժամկետն առաջիկայում լրանում է, տեսնենք, թե ինչ կպասվի նրան:

*Նյութերը՝ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ*

ԼՈՒՐԵՐ

## ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԵՂԾԵԼՈՒ ՄԵՂԱԴՐԱՆՔ

Ոստիկանության Էրեբունու բաժնի քրեական հետախույզները հուլիսի 8-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանում ձերբակալել եւ բաժին են տարել 42-ամյա Կարինե Պ.-ին: Նա 2023 թ. օգոստոսի 4-ից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի (Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը) մեղադրանքով:

Խափանման միջոց ընտրվել է ստորագրությունը:

## ՓՈՐՁԵԼ Է ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼ ՔՐՈՋ ԱՄՈՒՍՆՈՒՆ

2024 թվականի հուլիսի 8-ին՝ ժամը 07:14-ին, Աստղիկ Բ/Կ-ից հաղորդում է ստացվել այն մասին, որ դանակահարվելու հետեւանքով՝ որովայնի շրջանի կտրած վերք ախտորոշմամբ շտապօգնության խմբի կողմից իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել մի տղամարդ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է նշված անձի, ինչպես նաեւ վերջինիս հիշյալ մարմնական վնասվածքը պատճառած անձի ինքնությունը, ովքեր Երեւանի բնակիչներ են՝ ծնված 1963թ.:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախաձեռնել է քրեական վարույթ:

Նախաքննության ընթացքում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ 2024 թվականի հուլիսի 8-ին՝ ժամը 06:30-ի սահմաններում, Երեւան քաղաքի Վանթյան փողոցում գտնվող տանը 61-ամյա տղամարդը, կյանքից զրկելու դիտավորությամբ, դանակով հարվածել է քնած վիճակում գտնվող՝ քրոջ ամուսնու կրծքավանդակին, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներում հանցանքն ավարտին չի հասցրել. քույրը եւ վերջինիս ամուսինը արթնացել են եւ դանակը ձեռքից վերցրել:

Քրեական վարույթի շրջանակում կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում վերցվել է հանցագործության գործիք դանակը, հարցաքննվել են մի շարք անձինք, նշանակվել են դատաբժշկական, դատագենետիկական փորձաքննություններ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 61-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանքը կիրառելու վերաբերյալ:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 9-ից հուլիսի 10-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 89 դեպք:*

ՄԱՐԶ

## ՌՈՒՍՆԵՐԸ ՓՈՐՁԵԼ ԵՆ ԾԱԽԵԼ ԶՈՐԱՆՈՑԸ

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղից տեղեկացանք, որ ավելի քան 10 օր առաջ ռուսական զինուժը ՀՀ ԱԱԾ-ին ի պահ է հանձնել Ոսկեպարի սահմանագոտում կառուցված զորանոցը: Այդտեղ գտնվող 20-30 հոգանոց ՌԴ զորախումբը հեռացել է: Ռուսական կողմը փորձել է Հայաստանին վաճառել հավաքովի մոդուլներից կառուցված զորանոցը, սակայն թանկ գին են ասել, գործարքը չի կայացել: Ռուսական զինուժը հետո կքանդի այդ զորանոցը: Հայտնի չէ, թե ինչ կլինի հայ-ռուսական երկթեւ խաչքարի հետ, որը հառնում է զորանոցի կողքին: Ռուսական զինուժը Ոսկեպարի սահմանագոտում էր գտնվում 2021 թվականի օգոստոսի 2-ից. սկզբում ռուսաստանցի զինծառայողները բնակվում էին Ոսկեպարի դատարկ տներից մեկում, հետո ՀՀ կառավարության առաջարկով Նոյեմբերյան համայնքի կողմից նվիրաբերված 2 հեկտար տարածքում զորանոց կառուցեցին:

## ԾՐԱԳԻՐԸ ՁԱԽՈՂՎԱԾ Է

ՔՊ-ական իշխանությունը տարփողեց, որ մինչեւ 2026 թվականը ՀՀ կառավարությունը կիրականացնի Հայաստանում 300 դպրոցի ու 500 մանկապարտեզի նորոգման, կառուցման եւ վերակառուցման ծրագիրը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք, թե ներկայումս Տավուշի մարզում քանի՞ դպրոց ու մանկապարտեզ է կառուցվում: Մարզպետարանից պատասխանել են. «Տավուշի մարզում ներկայումս կառուցվում է Բագրատաշենի մոդուլային մանկապատեզը եւ Գանձաքարի, Կիրանցի, Դովեղի նոր դպրոցները» : Դովեղի դպրոցի շինարարությունը ֆինանսավորման ընդհատման պատճառով ավելի քան 3 ամիս է՝դադարեցված է: Ադրբեջանին միակողմանի կերպով տարածքներ հանձնելու հետեւանքով նոր ձեւավորված սահմանից 50 մետր հեռավորությամբ կառուցվող Կիրանցի դպրոցի շենք, ամենայն հավանականությամբ, Կիրանցի աշակերտները չեն հաճախելու, նորակառույց շենքը ծառայելու է որպես սահմանապահների զորանոց:

## ՏԱՎՈՒՇԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է 541 ԲՌՆԱԳԱՂԹՎԱԾ

2023թ. աշնանը Տավուշի մարզում բնակություն է հաստատել Արցախից բռնագաղթած 780 ընտանիք՝ 2970 անձ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք, թե ներկայումս մարզում Արցախից բռնագաղթած քանի՞ ընտանիք, քանի՞ անձ է բնակվում: Մարզպետարանից պատասխանել են. «2024թ. հունիսի 15-ի դրությամբ Տավուշի մարզի բնակավայրերում հաշվառված է ԼՂ-ից բռնի տեղահանված 694 ընտանիք, 2429 անձ»: Արցախցիները Տավուշից հեռացել են, որովհետեւ սահմանամերձ մարզում սեփական բնակարան չունեն, չեն կարողանում իրենց մասնագիտությամբ աշխատատեղ գտնել, Ադրբեջանի կողմից նոր ագրեսիայի դեպքում թիրախներից մեկը Տավուշի սահմանագոտին է լինելու, ինչն անհանգստացնում է Ադրբեջանի հարձակման հետեւանքով զոհեր տված, հայրենիք, տուն, ապրուստ կորցրած արցախցիներին, որոնք իրենց համար բնակության ապահով վայրեր են ընտրում:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՊԱՍԻՎ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՀԱՆԳԻՍՏ

# ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՆԳԻՍՏԸ՝ ԵՆՈՔԱՎԱՆՈՒՄ

**Ամառվա այս օրերին շատերն արդեն հասցրել են կազմակերպել իրենց հանգիստը, ինչպես Հայաստանից դուրս, այնպես էլ Հայաստանի ներսում:**



«Ժողովուրդ» օրաթերթը շատ անգամներ է անդրադարձել Հայաստանի տեսարժան վայրերում հանգստի գոտիների արժեքներին, այս անգամ հերթը Ենոքավանինն է:

Այսպիսով՝ «Ապագա Ռեզորթ» հյուրանոցում կան 12 երկհարկանի քոթեջներ, յուրաքանչյուր քոթեջում առկա է 2 սենյակ:

Հյուրանոցում կգտնեք նաեւ ձիավարման ծառայություն, արշավներ, ձկնորսություն, ֆուտբոլի եւ վոլեյբոլի դաշտեր:

Այդտեղ ստանդարտ մեկտեղանի քոթեջի արժեքը 22.500 դրամ է:

Երկտեղանի ստանդարտ քոթեջի արժեքը 25.500 դրամ է, հյուղակը՝ 30.700 դրամ: Դելյուքս մեկտեղանի քոթեջը արժե 33.700 դրամ:

Հյուրանոցում կա բար, ռեստորան, ավտոկայանատեղի, կոնֆերանս դահլիճ, անվճար Wi-Fi ինտերնետ:

«Լաստիվեր Ռեզորթ»-ում (2 անձ, երկտեղանի մահճակալ) սենյակի արժեքը 22.500դրամ է:

Լյուքս համարինը (2 + 2* անձ, 1 երկտեղանի king size մահճակալ եւ 1 բացվող բազմոց)՝37.500 դրամ:

Դելյուքս համարների արժեքը (2 + 2* անձ, 1 երկտեղանի king size մահճակալ եւ 1 բացվող բազմոց)՝27.500 դրամ:

Ընտանեկան համար (4 + 2* անձ, 1 հատ երկտեղանի մահճակալ, 2 հատ մեկտեղանի մահճակալ եւ բացվող բազմոց)՝45.000 դրամ:

«Գետահովիտ ռեզորթ»-ում հետեւյալ գներն են գործում՝

Փաթեթ 1: 3 օր/ 2 գիշեր. մեկ անձի համար նախատեսված սենյակների արժեքը 30.000 դրամ է:

Սնունդը՝ նախաճաշ: Հյուրանոցի մեկ օրվա արժեքը մեկ անձի համար ստանդարտ համարում 15.000 դրամ է:

Փաթեթ 2: 4 օր/ 3 գիշեր, երկու անձի համար, արժեքը՝ 75000 դրամ: Սնունդը՝ նախաճաշ:

Հյուրանոցի մեկ օրվա արժեքը երկու անձի համար ստանդարտ համարում 25.000 դրամ է:

Ինչո՞վ է առանձնանում Ենոքավանը. Ենոքավանն առանձնանում է ոչ միայն իր բնությամբ, այլ նաեւ էքստրեմալ հանգիստ կազմակերպելու հնարավորությամբ՝ սուր զգացողությունների սիրահարների համար:

Սա այն գյուղն է, որտեղ 2016 թվականի ապրիլին բացվեց «Յելլ Էքսթրիմ Պարկ»-ը: Այն փորձությունների այգի է՝ վայր, որտեղ կարող եք, առանց պրոֆեսիոնալ մարզիկ լինելու, զբաղվել էքստրեմալ տարբեր սպորտաձեւերով:

«Յելլ Էքսթրիմ Պարկ»-ը հայտնի է հատկապես զիփլայնով, այն Հայաստանում առաջինն էր: Ունի հինգ թռիչքուղիներ, որոնցից յուրաքանչյուրը տարբեր բարձրություն եւ տարբեր երկարություն ունի: Եթե ճանապարհին սկսեցիր, ապա անպայման ավարտին պիտի հասցնես: Սա էքստրեմալ հաճույք է, որն անպայման պետք է վայելել:

Բացի զիփլայնից՝ փորձությունների այգին առաջարկում է նաեւ փեյնթբոլ, արտաճանապարհային տուրեր եւ ձիարշավային տուրեր:

*ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,*
*ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## «ԳՅՈՒՐՋԻԵՎ» ԱՆՍԱՄԲԼԻ ՆՈՐ՝ «ԶԱՐԹԻՐ» ԱԼԲՈՄԸ

Հուլիսի 16-ին՝ ժամը 19:00-ին, «Առնո Բաբաջանյան» համերգասրահում բացառիկ համերգային ծրագրով հանդես կգա «Գյուրջիեւ» անսամբլը, որի ընթացքում տեղի կունենա նաեւ երաժշտախմբի նոր՝ «Զարթիր» ալբոմի շնորհանդեսը:

Այս տարի գերմանական հեղինակավոր ECM Records լեյբլում թողարկվեց «Գյուրջիեւ» անսամբլի երրորդ՝ «Զարթիր» խորագրով ալբոմը: Այն վերաիմաստավորում է հայազգի մեծանուն մտավորական, հոգեւոր ուսուցիչ, կոմպոզիտոր, պարուսույց եւ փիլիսոփա Գեորգի Գյուրջիեւի երաժշտությունը՝ ժողովրդական գործիքավորմամբ:

Ձայնասկավառակում անդրադարձ կա նաեւ հայ աշուղների եւ բանաստեղծների հարուստ ավանդությանը՝ Ջիվանի, Բաղդասար Դպիր, Սայաթ-Նովա: Ալբոմի տպավորիչ շապիկի պատկերը Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմից է:

Վերջին տարիներին միջազգային լայն ճանաչում ձեռք բերած անսամբլում ընգրկված են հայկական ավանդական գործիքներ կատարող փայլուն երաժիշտներ: Անսամբլի հարուստ ստեղծագործական պատմությունը ներառում է Music of Georges I. Gurdjieff եւ Komitas ալբոմները, որոնք արժանացել են հեղինակավոր մրցանակների, այդ թվում՝ Նիդեռլանդական Edison Awards-ը:

Ելույթներ ունենալով 30 երկրի շուրջ 150 քաղաքներում՝ աշխարհի ամենահեղինակավոր համերգասրահներում եւ խոշոր միջազգային փառատոներում, հայկական «Գյուրջիեւ» անսամբլը՝ Լեւոն Իսկենյանի ղեկավարությամբ, գեղարվեստական որակի նոր նշաձող է սահմանում՝ կապելով արեւելքի եւ արեւմուտքի հնագույն եւ ժամանակակից ավանդույթները, ներկայացնում հայկական հոգեւոր եւ մշակութային էության բարձրարվեստ դրսեւորումներ:

The New York Times-ը գրում է. «Հզոր եւ հիպնոտիկ: «Գյուրջիեւ» անսամբլը ունկնդիրներին հնարավորություն է տալիս լսել երաժշտության էթնիկ առանձնահատկությունն ամենավառ գույներով»:

The Guardian, BBC, Songlines, The Independent - այս պարբերականների հիացական գնահատականները հայ ավանդական երաժշտության, ազգային գործիքների խորհրդավոր հնչողության եւ անսամբլի կատարողական բարձր վարպետության վերաբերյալ ինքնին խոսուն են:

## 8 ՄԵԴԱԼ՝ ՖԻԶԻԿԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅՈՒՄ

Խանտի Մանսիյսկում տեղի ունեցած ֆիզիկայի միջազգային գիտական օլիմպիադային Հայաստանի հավաքականն արժանացել է 2 արծաթե եւ 6 բրոնզե մեդալների: Բոլոր աշակերտները Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի եւ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ավագ դպրոցի աշակերտներն են: Օլիմպիադային մասնակցում էր 19 երկրի 108 աշակերտ:

Արծաթե մեդալի են արժանացել ֆիզմաթ դպրոցի աշակերտ Արսեն Աղայանը եւ ՀԱՊՀ-ի ավագ դպրոցի սան Արտյոմ Գասպարյանը:

Բրոնզե մեդալի են արժանացել ՀԱՊՀ-ի ավագ դպրոցի սաներ Արմեն Գագազյանը, Նարեկ Մովսիսյանը եւ Արսեն Ասատրյանը, իսկ ֆիզմաթ դպրոցից՝ Նարեկ Գալստյանը, Սմբատ Պողոսյանը եւ Գոռ Հասրաթյանը:

*● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 18 պատահար. 25 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԿԱՆԽԵԼ Է ՊԵԿ-Ը

## ՄԱՔՍԱՆԵՆԳ ԿԵՐՊՈՎ 6.5 ԿԳ ԴԵՂԱՄԻՋՈՑԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՓՈՐՁ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչությունը շարունակում է պայքարը տարբեր տեսակի դեղամիջոցների՝ Հայաստանի Հանրապետության սահմանով անօրինական տեղափոխման ուղղությամբ:

Օրերս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման գլխավոր վարչությունից ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժին տվյալներ էին ստացվել այն մասին, որ քաղաքացի Է.Չ.-ն իր կողմից շահագործվող տրանսպորտային միջոցով մաքսային հսկողության ներքո գտնվող դեղամիջոցների տեղափոխումը Վրաստանից Հայաստանի Հանրապետություն կազմակերպում է մաքսային հսկողությունից թաքցնելով՝ կիրառելով դեղամիջոցների հայտնաբերումը դժվարացնող եղանակ:

Օպերատիվ տվյալներն իրացնելիս Մաքսանենգության դեմ պայքարի ու Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման եւ հսկողության վարչությունների աշխատակիցները Վրաստանից ժամանելուց հետո, Հայաստանի Հանրապետության պետական սահմանի «Բագրատաշեն» մաքսային անցման կետի տարածքում, մաքսային հսկողություն են իրականացրել Է.Չ.-ի եւ նրա կողմից շահագործվող տրանսպորտային միջոցի նկատմամբ:

Մաքսային հսկողություն, մասնավորապես՝ մաքսային զննում իրականացնելու նպատակով տրանսպորտային միջոցն ուղեկցվել է մաքսային անցման կետի խորը զննման անգար, որտեղ տրանսպորտային միջոցի բեռնախցիկի եւ սրահի հետեւի նստատեղի բաժանարարի հատվածի հատուկ հարմարեցված վայրից հայտնաբերվել են մաքսային հայտարարագրման ենթակա եւ մաքսային հսկողությունից թաքցված ընդհանուր 6.5 կգ քաշով դեղամիջոցներ:

Դեպքի առնչությամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման արձանագրություն, որը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության ՊԵԿ իրավաբանական վարչություն:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արմելա Սամվելի Դավթյանս երկու ամիս առաջ Կենտրոն վարչական շրջանում կորցրել եմ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ավարտական դիպլոմս: Գտնողին խնդրում եմ զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ + 374 91 81 56 56:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»

Գ.

# ԼԱՎԱԳՈՒՅՆԸ՝ ԸՍՏ «ASIAN BANKING...» ԱՄՍԱԳՐԻ

**«Արդշինբանկը» Asian Banking & Finance միջազգային ամսագրի կողմից հաղթող է ճանաչվել միանգամից երկու անվանակարգում՝ արժանանալով «Տարվա մանրածախ բանկ» եւ «Տարվա փրայվիթ բանկ» անվանակարգերին:**




Այսպես է գնահատել փորձագետների միջազգային հանձնաժողովն «Արդշինբանկի» գործունեությունը 2024 թվականի ընթացքում: Մրցանակները հանձնվել են բանկերին՝ նորարարության, իրենց գործին նվիրվածության եւ հաճախորդներին բացառիկ սպասարկում ապահովելու համար:

Ամսագրի կողմից հաղթողներին ուղղված շնորհավորական հաղորդագրության մեջ մասնավորապես ասվում է. «Այս մրցանակները վկայությունն են այն բանի, որ յուրաքանչյուր ընկերություն շարունակաբար կատարելագործում է իր աշխատանքը եւ ոլորտի համար նոր նշագիծ սահմանում՝ կիրառելով լավագույն փորձը եւ ինովացիոն մոտեցումները, որոնք էլ ձեւավորում են բանկային գործի ապագան»:

«Արդշինբանկի» մանրածախ բիզնեսի տնօրեն Արտակ Խաչատրյանի կարծիքով բանկի բոլոր մրցանակների հիմքում յուրաքանչյուր աշխատակցի ամենօրյա մանրակրկիտ աշխատանքն է, որ թույլ է տալիս հաճախորդներին որակյալ եւ հասանելի ծառայություններ մատուցել:

«Արդեն որերորդ անգամ «Արդշինբանկը» նորից լավագույնն է ճանաչվում Հայաստանում համընդհանուր ակտիվներով, զուտ շահույթով, միջազգային ֆինանսավորման ծավալներով, շահութաբերությամբ եւ մասնաճյուղերի ցանցի ընդլայնմամբ: Այս փաստերը որոշիչ են դարձել ամբողջ աշխարհից բազմաթիվ արժանավոր թեկնածուների մեջ հաղթողի ընտրության գործում: Այս մրցանակները հերթական անգամ վկայում են «Արդշինբանկի» զարգացման ռազմավարական ճիշտ վեկտորի մասին»,- նշեց Ա. Խաչատրյանը:

Մրցանակակիր բանկերի ամբողջական ցանկը ներկայացված է ամսագրում:

*«Արդշինբանկի» մասին*

«Արդշինբանկը» Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: «Արդշինբանկն» ունի շուրջ 400.000 հաճախորդ, որոնց սպասարկում են բանկի 1.700-ից ավելի աշխատակիցներ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման ու վաճառքի հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 65 մասնաճյուղերով, համապարփակ մոբայլ եւ օնլայն բանկինգի համակարգերով: Բանկն ունի երկրում ամենալայն մասնաճյուղային ցանցը, ինչպես նաեւ ներկայացուցչություն Փարիզում: «Արդշինբանկը» Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard, BB- (Stable), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitch (BB- (Stable)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

*ABF-ի մասին*

Asian Banking & Finance (ABF)-ը ոլորտային ամսագիր է, որ սպասարկում է Ասիայի ֆինանսական ծառայությունների դինամիկ ինդուստրիան: Ամսագիրը թողարկում է վերլուծական հոդվածներ, ոլորտային հաշվետվություններ առեւտրային, մանրածախ եւ ներդրումային-բանկային ընկերությունների մասին Ասիայում:

ԼՈՒՐԵՐ

## 4 ՄԻԼԻԱՐԴ՝ 500 ՎԵՐԵԼԱԿԻ ՀԱՄԱՐ

Երեւանի քաղաքապետարանը մայիսի 13-ին պայմանագիր է կնքել «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ի հետ՝ վերելակների ձեռքբերման եւ տեղադրման համար:

Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 3 մլրդ 631 մլն 986 հազար դրամ, որով պետք է տեղադրվի 400 վերելակ:

2019-ին ընկերությունը 159 միլիոն դրամի դիմաց տեղադրել է 17 վերելակ: 2020-ին քաղաքապետարանի եւ «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ի միջեւ կնքված պայմանագրով փոխարինվել է 500 վերելակ, պայմանագրի արժեքը կազմել է 4 մլրդ 678 մլն դրամ:

1967-ին հիմնադրված «Ռելե»ի գործարանն այժմ կոչվում է «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ, որի գլխավոր տնօրենը Ռաֆայել Գրիգորյանն է. վերջինս պահածոների գործարանի տնօրեն Սարգիս Պողոսյանի աներն է:

Երեւանի քաղաքապետարանը 2024 թվականի փետրվարի 23-ին կնքել է եւս մեկ վերելակների ձեռքբերման եւ տեղադրման պայմանագիր: Այս պայմանագրի արժեքը կազմել է 939 մլն 990 հազար դրամ, որով «Ավագ Շին 1» ՍՊԸ-ն պարտավորվում է իրականացնել 100 վերելակների տեղադրում:

Հարկ է նշել, որ պայմանագրերը ձեռք են բերվել բաց մրցույթի ընթացակարգով:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## «ՅՈՒՆԻԲԱՆԿԸ» ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ Է ԹՈՂԱՐԿԵԼ

«Յունիբանկը» թողարկել է դրամային եւ դոլարային պարտատոմսեր՝ համապատասխանաբար, 9.75% եւ 5% տարեկան եկամտաբերությամբ: Դրամային պարտատոմսերի թողարկման ծավալը կազմում է 2 մլրդ ՀՀ դրամ, դոլարային պարտատոմսերինը՝ 5 մլն ԱՄՆ դոլար: Պարտատոմսերի շրջանառության ժամկետը սահմանվել է 36 ամիս: Արժեկտրոնային եկամուտը կվճարվի եռամսյակը մեկ:

Պարտատոմսերը կարելի է ձեռք բերել «Յունիբանկի» գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում: Թողարկման տեղաբաշխումը նախատեսվում է ավարտել մինչեւ 09.09.2024թ.: Տեղաբաշխման եւ ցուցակման ավարտից հետո պարտատոմսերը շրջանառվելու են երկրորդային շուկայում՝ AMX Հայաստանի ֆոնդային բորսայի առեւտրային հարթակում:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորվում են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

Ծրագրային ազդագիրը (գրանցված է 05.06.2024թ. թիվ 1/204 Ա), դրա լրացումները եւ սույն թողարկման վերջնական պայմանները հրապարակված են www.unibank.am կայքում:

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՍՈՖԻ ԴԵՎՈՅԱՆ 75

# ԱՐՏԻՍՏԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է ՈՍԿԵ ՄԵԴԱԼՈՎ

**Հայաստանի վաստակավոր արտիստ, «Մովսես Խորենացի» մեդալակիր, պարարվեստի նվիրյալ Սոֆի Դեւոյանը նշեց ծննդյան 75-ամյակը:**



Օրվա շրջանակում Ժողովրդական երաժշտության եւ պարի ազգային կենտրոնը Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում իրականացրել է «Սոֆի Դեւոյանն ու Պարի պետականը» խորագրով Հայաստանի պարի պետական անսամբլի համերգային երեկոն: Միջոցառմանը ներկա է եղել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Շնորհավորելով պարուհուն՝ Ժաննա Անդրեասյանը նշել է. «Այն, ինչով Դուք զբաղվում եք, ոչ միայն մշակույթ է, այլեւ մարմնի կրթություն ու գեղագիտական ճաշակ, որի շնորհիվ բազմաթիվ երեխաներ ստացել են ճիշտ ուղղորդում ու գիտելիք: Վստահ եմ՝ այդ դպրոցն անցնելով՝ մենք ձեռք ենք բերել ոչ միայն պարուհիներ ու արվեստի մարդիկ, այլեւ լավ քաղաքացիներ:

Գնահատելի է այն աշխատանքն ու արվեստը, որ շարունակաբար կերտում եք՝ մասնակիցը դարձնելով նաեւ մեզ, որովհետեւ Ձեր յուրաքանչյուր ներկայացում վայելք է»: Նախարար Ժաննա Անդրեասյանը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ոսկե մեդալով է պարգեւատրել Սոֆի Դեւոյանին՝ պարարվեստում ունեցած նշանակալի ավանդի, երկարամյա գործունեության, ինչպես նաեւ ծննդյան 75-ամյա հոբելյանի կապակցությամբ: Ծնվել է 1949 թ. հուլիսի 8-ին, Երեւանում: 1951թ. ընտանիքով տեղափոխվել է Օրենբուրգի շրջանի Բուզուլուկ քաղաք, որտեղ ընդունվել է միջնակարգ դպրոց: 1961թ. ընտանիքով վերադարձել է Երեւան: 1961-67 թթ. սովորել է Երեւանի պարարվեստի պետական ուսումնարանի դասական պարի բաժնում: 1967 թ. ընդունվել է Հայաստանի Պարի պետական համույթ, որտեղ շուրջ 25 տարի պարել է որպես մենակատար, իսկ 1986 թվականից եղել է համույթի պարուսույցներից: Ելույթներ է ունեցել աշխարհի տարբեր երկրների բեմերում՝ «Օլիմպիա», «Գրանդ Օպերա», «Մետրոպոլիտեն Օպերա», «Կարնեգի Հոլլ» եւ այլն: Պարի պետական համույթի պարացանկում պարել է «Սուսերով պար», «Շալախո», «Ուզունդարա», «Սայաթ-Նովա», «Խաղողի պար», «Գնչուական», «Սյուիտ», «Չինար ես», հայկական ժողովրդական եւ այլ պարեր: Լոնդոնում «Ղարաբաղի եղնիկ» պարի կատարմամբ հռչակավոր բալետմայստեր Ջորջ Բալանչինի կողմից արժանացել է «Հայկական կարապ» կոչմանը: 1973 թվականին նկարահանվել է «Կամոյի վերջին սխրանքը» ֆիլմում: 1992 թվականին ստեղծել է «Պարի եւ հոգու թատրոնը»: Հեղինակել է մի քանի բեմադրություններ՝ «Կոմիտասը մեր աչքերով», «Ամարաս», «Ընդդիմություն», «Ազնավուրյան ակնթարթներ», «Ես հավատում եմ», սյուիտ՝ նվիրված Սերգեյ Փարաջանովին եւ շուրջ 800 պարային համար: Պարարվեստի ուսումնարանի տնօրեն Թերեզա Գրիգորյանի պատվերով բեմադրել է «Սամսարա» պարը՝ միջազգային փառատոնի համար, որը տեղի է ունեցել Շվեյցարիայի Լոզան քաղաքում եւ ընդգրկվել է լավագույն բալետմայստերների տասնյակում: Դուդուկահար Ջիվան Գասպարյանի հետ հյուրախաղերով հանդես է եկել Բեյրութում: 2005 թվականին նկարահանվել է նրանց համատեղ տեսահոլովակը: 1995 թվականին ստեղծել է նոր ոճ, որտեղ չկան զգեստ, դեմք. կան միայն ոտքեր եւ ձեռքեր: Այդ ոճի մեջ արտացոլվում են հայկական մանրանկարչությունը եւ փիլիսոփայությունը: 1994 թ. ստեղծել է մշակույթի կենտրոն, որտեղ գործում են բազմաթիվ պարային խմբակներ, ինչպես նաեւ մանկական անսամբլներ: 2009 թվականից համագործակցել է «Արմենիա» հեռուստաընկերության հետ, որտեղ խաղացել է մի քանի հեռուստասերիալներում: 1984 թվականին արժանացել է Հայաստանի վաստակավոր արտիստի կոչման, 2009 թվականին՝ ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալի:

*ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

## «ՎԱՐՊԵՏ» ՄՐՑԱՆԱԿԸ ՀԱՆՁՆՎԵԼ Է Գ. ՊԸԼՏՅԱՆԻՆ

Երեւանի՝ «Ոսկե ծիրան» 21-րդ կինոփառատոնի շրջանակում փառատոնի պատվավոր հյուրերը, մասնակիցները եւ կազմակերպիչները հյուրընկալվեցին Արմավիրի մարզի Առատաշեն համայնքում գործող «Aratashen winery» գինարանում: Օրը հատկապես նշանավորվեց նրանով, որ հենց Aratashen Winery գինարանում, կինոյում մեծ ավանդի համար, «Վարպետ» մրցանակը հանձնվեց Գրիգոր Պըլտյանին, ով, ցավոք, առողջական խնդիրների պատճառով չկարողացավ ներկա գտնվել արարողությանը:

Պըլտյանը լայնորեն ճանաչված է իբրեւ ժամանակակից արեւմտահայ գրականության ամենակարեւոր գրական գործիչներից եւ արեւմտահայերենով գրող ամենանորարար ստեղծագործողներից մեկը: Բեղուն տաղանդով վիպագիր, ակնարկագիր եւ գրաքննադատ Պըլտյանը հեղինակել է ավելի քան 30 հատոր աշխատանք, որոնք լույս են տեսել Մերձավոր Արեւելքում, Եվրոպայում, Հայաստանում եւ Միացյալ Նահանգներում: Ծնված լինելով Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում՝ արդեն երկար տարիներ նա ապրում է Փարիզում եւ դասախոսություններ կարդում Եվրոպայում ու ԱՄՆ-ում:

## «ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԻ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

«Ֆասթ» բանկի աջակցությամբ «Մետրո» թատրոնում կայացել է «Հեղինակային երգի» միջազգային փառատոնի նախընտրական փուլը: Ելույթ են ունեցել 60 հայտերից ընտրված 27 հեղինակ-կատարողներ: Մասնագիտական ժյուրին՝ երգահան Էդուարդ Զորիկյանի գլխավորությամբ, ընտրել է տասը լավագույններին:

«Շնորհակալությունս պետք է հայտնեմ «Ֆասթ» բանկին: Շնորհիվ այդ աջակցության՝ մենք այսօր հնարավորություն ունենք երիտասարդությանն ինտեգրելու, հնարավորություն ունենք ժանրի գործունեությունը զարգացնելու փառատոնային ձեւաչափի մեջ: Այդ աջակցության շնորհիվ է, որ երիտասարդները հնարավորություն են ստանում ավագ սերնդի հետ այդ խաչմերուկը ձեւավորել, ստեղծագործական կյանք ունենալ եւ այդ ընթացքը ստանալ հենց այս փառատոնի շրջանակներում», - նշել է «Բարդերի» ակումբի հիմնադիր, երգահան Վախթանգ Հարությունյանը:

Հավելենք, որ հուլիսի 19-ից 21-ը Սեւանում տեղի կունենա հեղինակային երգի «Հուսո առագաստ -2024» միջազգային փառատոնը: Փառատոնային եռօրյա համերգային ծրագրի շրջանակներում կլինեն նաեւ հյուրեր այլ երկրներից: «Ֆասթ» բանկն արդեն երկրորդ տարին է, ինչ փառատոնի գլխավոր հովանավորն է: Բադալյանների ընտանիքին պատկանող ընկերությունների խմբի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կարեւոր մաս է աջակցությունը Հայաստանի մշակութային նախագծերին:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի պատվիրակությունը հուլիսի 12-24-ը Հունգարիայի Դեբրեցեն եւ Միշկոլց քաղաքներում կմասնակցի Եվրոպական համալսարանական խաղերին:

Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի նախագահ, Հայաստանի պատվիրակության ղեկավար Հովհաննես Գաբրիելյանի խոսքով՝ խաղերին կմասնակցեն Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի եւ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողները:

ՀՊՏՀ-ի ուսանողները հանդես կգան աղջիկների սեղանի թենիս, իսկ ՀՖԿՍՊԻ ուսանողները՝ պարա սեղանի թենիս, շախմատ եւ թաեքվոնդո մարզաձեւերում:

«Սպասելիքները մեծ են, քանի որ մասնակցելու են Հայաստանի հավաքականների կազմերը համալրած ուսանող մարզիկները, որոնք մեր երկրի անունը բարձր են պահում նաեւ տարբեր միջազգային մրցաշարերում»,- ասում է Հովհաննես Գաբրիելյանը:

ՀՊՏՀ սեղանի թենիսի աղջիկների թիմում ներառված են Մանե Ղազարյանը, Ասյա Պողոսյանը եւ Հայաստանի անհատական առաջնության չեմպիոն Ռիմա Խլղաթյանը: Մարզիչն ամբիոնի դասախոս Մեսրոպ Ղազարյանն է, որն ընդգրկված է նաեւ Հայաստանի սեղանի թենիսի հավաքականի մարզչական շտաբում:

Պարա սեղանի թենիս մրցաձեւում Հայաստանը կներկայացնի ՀՖԿՍՊԻ ուսանող Գեւորգ Բեգլարյանը: Նրան կուղեկցի ամբիոնի վարիչ, մարզիչ Ռիմա Բեգոյանը:

Շախմատի հավաքական թիմում ընդգրկված են գրոսմայստեր Մամիկոն Ղարիբյանը եւ Արտյոմ Մանուկյանը: Մարզիչը Երվանդ Հակոբյանն է:

Թաեքվոնդոյի թիմում ընդգրկված են Հայաստանի առաջնությունների տիտղոսակիր մարզիկներ, միջազգային տարբեր մրցաշարերի մասնակիցներ Մելինե Հովհաննիսյանը եւ Դավիթ Թորոսյանը:

Եվրոպական համալսարանական խաղերին կմասնակցի 36 երկրի շուրջ 5000 պատվիրակ: Մրցաշարը կանցկացվի 20 մարզաձեւից:

## ԻՍՊԱՆԻԱՅԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ ՌԵԿՈՐԴԱԿԻՐ

Իսպանիայի հավաքականը երեկ (խմբ.) հաղթեց Ֆրանսիային (2-1) եւ դարձավ պատմության մեջ առաջին թիմը, որը հաղթեց Եվրոպայի առաջնությունում վեց հանդիպում անընդմեջ մեկ մրցաշարի ընթացքում:

Նախկինում մրցաշարի ռեկորդը կիսում էին 1984 թվականի Եվրոպայի (Ֆրանսիա) եւ 2020 թվականի (Իտալիա) առաջնության հաղթողները՝ 5-ական հաղթանակ:

Իսպանիայի հավաքականը Եվրոպայի 2024 թվականի առաջնությունում արդեն 13 գոլ է խփել: Սա Եվրո-2020-ում Իսպանիայի հավաքականի ռեկորդի կրկնությունն է:

*● Հուլիսի 15-ին՝ ժամը 19:30-ին, «Հրանտ Մաթեւոսյան» մշակութային կենտրոնում տեղի կունենա «Գոմեշը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 6000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ կարգով է մերժվում ապոստիլով վավերացումը:**

*Պողոս Հարությունյան (43 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փաստաթղթի վրա ապոստիլ դնելու դիմումը մերժվում է, եթե՝

ա) ներկայացված փաստաթուղթը չի բխում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից,

բ) փաստաթուղթը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից հաստատված՝ ապոստիլ դնելու կարգով սահմանված պահանջների խախտմամբ,

գ) դիմումում նշված է, որ փաստաթուղթն ուղարկվում է միայն Հաագայի կոնվենցիային չմիացած երկիր,

դ) փաստաթղթում առկա են չհաստատված ջնջումներ, փոփոխություններ կամ սխալներ,

ե) փաստաթղթի վրա ապոստիլ դնելու լիազորությունը նախարարությանը վերապահված չէ:

Նշված հիմքերով փաստաթղթի մերժումը կատարվում է այն նախարարություն մուտք լինելու օրվանից մեկ օրվա ընթացքում: Փաստաթղթի վրա ապոստիլ դնելու դիմումը մերժվում է գրավոր: Դիմումի մերժման մեջ հստակ նշվում են մերժման պատճառներն ու իրավական հիմքերը: Ապոստիլ դնելու դիմումի մերժման դեպքում մերժման պատասխանի հետ միասին դիմողին է վերադարձվում ապոստիլ դնելու համար ներկայացված փաստաթղթի իսկական օրինակը եւ պետական տուրքի վճարման անդորրագիրը: Դիմումի մերժումը օրենքով սահմանված կարգով կարող է բողոքարկվել դատարան:

*ՀՀ արդարադատության նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նշենք, որ ապոստիլով հաստատվում է փաստաթուղթը ստորագրած անձի պաշտոնի, ստորագրության, ինչպես նաեւ փաստաթղթի վրա դրված կնիքի կամ դրոշմակնիքի իսկությունը: Ապոստիլ դնելու համար գանձվում է պետական տուրք՝ 5000 ՀՀ դրամ:

## ԿՐԹԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչ ժամկետներում են ընդունվում տեղափոխության մասին դիմումները:**

*Հրաչուհի Արզումանյան (51 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Տեղեկացնում ենք, որ տեղափոխության մասին ուսանողների դիմումներն ընդունվում են համապատասխան ձեւով ուսուցման կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող եւ հաջորդող 2 շաբաթվա ընթացքում: Ուսանողը տեղափոխման մասին դիմումը ներկայացնում է իր ուսումնառության բուհի ռեկտորին ակադեմիական տեղեկանք ստանալու համար: Բուհի կողմից ակադեմիական տեղեկանք տրամադրվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում:

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է, եթե տեղափոխման պահին ուսումնառած ծրագրի եւ ընդունող ծրագրի բովանդակությունների տարբերությամբ պայմանավորված՝ առարկայական տարբերությունների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



Երեւանում նախատեսվում է կառուցել հավաքովի կոնստրուկցիաներով նոր մարզադաշտ:

Ծրագիրը կյանքի կոչելու համար արդեն սկսվել են համագործակցությունները միջազգային գործընկերների եւ ոլորտի մասնագետների հետ:



## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



2011
Ժողովուրդ 1
www.armlur.am



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:



## ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝ (060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*



## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | | |
|---|---|---|
| Շիրակ | +7 +12 | +25 +29 |
| Կոտայքի լեռներ | +8 +10 | +24 +27 |
| Կոտայքի նախալեռներ | +19 +21 | +30 +33 |
| Գեղարքունիք | +7 +11 | +24 +28 |
| Լոռի | +9 +14 | +25 +28 |
| Տավուշ | +14 +19 | +29 +33 |
| Արագածոտնի լեռներ | +7 +9 | +23 +27 |
| Արագածոտնի նախալեռներ | +16 +20 | +29 +33 |
| Արարատ | +19 +21 | +34 +36 |
| Արմավիր | +18 +20 | +34 +36 |
| Վայոց ձորի լեռներ | +8 +10 | +24 +27 |
| Վայոց ձորի նախալեռներ | +17 +19 | +33 +35 |
| Սյունիքի հովիտներ | +18 +21 | +31 +34 |
| Սյունիքի նախալեռներ | +12 +16 | +25 +28 |
| ԼՂՀ | +12 +15 | +24 +26 |
| Երեւան | +22 +24 | +32 +34 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.7.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*